

Էս գիշեր, լուսնակ գիշեր / Es gisher, lusnak gisher

Չափավոր

Moderato

Էս գի - շեր, լուս - նակ գի - շեր, վա՛յ, լե, լե, լե՛, լե՛, լե, լե, լե՛, լե՛,
 Es gi - sher, lus - nak gi - sher, vay, le, le, le, le, le, le, le, le,

լե՛, լե, լե՛. ձյուն է - կեր, գե - տին նախ - շեր,
 le, le, le: dzyunn ye - ker, ge - tin nakh - sher,

ո՛վ է տե - սել՝ սի - րած յա - րը մո - ռա - նա.
 ov e te - sel si - rats ya - rə mo - rra - na:

Ով մո - ռա - նա՛ էր - կու աչ - քով կու - րա - նա:
 Ov mo - rra - na yer - ku ach' - k'ov ku - ra - na:

- | | |
|---|--|
| <p>1. Էս գիշեր, լուսնակ գիշեր,
 Վա՛յ, լե, լե, լե՛, լե՛, լե,
 լե, լե՛, լե՛, լե, լե՛.</p> <p>Ձունն էկեր, գետին նախշեր,
 Ո՞վ է տեսել՝ սիրած յարը մոռանա.
 Ով մոռանա՛ երկու աչքով կուրանա.</p> <p>Աչքըդ դեմ արա՛ պաշեմ,
 Վա՛յ, լե...</p> <p>Կեր ունքեր, կարմիր թըշեր:
 Ո՞վ է տեսել...</p> | <p>1. Es gisher, lusnak gisher,
 Vay, le, le, le, le, le,
 le, le, le, le, le:</p> <p>Dzunn yeker, getin nakhsher,
 Ov e tesel sirats yarə morrana:
 Ov morrana yerku ach'k'ov kurana:</p> <p>Ach'k'ət dem ara pach'em,
 Vay, le...</p> <p>Kerr unk'er, karmir t'əsher.
 Ov e tesel...</p> |
| <p>2. Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,
 Վա՛յ, լե...</p> <p>Հացըս թող լինի գարի,
 Ո՞վ է տեսել...</p> <p>Մենակ յարըս ինձ համար
 Վա՛յ, լե...</p> <p>Սըրտով խոսքը կատարի:
 Ո՞վ է տեսել...</p> | <p>2. Ay gisher, darts'ir tari,
 Vay, le...</p> <p>Hats'əs t'ogh lini gari,
 Ov e tesel...</p> <p>Menak yarəs indz hamar
 Vay, le...</p> <p>Sərtov khosk'ə katari.
 Ov e tesel...</p> |
| <p>3. Ա՛ղջի, քու չարը տանեմ,
 Վա՛յ, լե...</p> <p>Քու սիրուդ ինձ կըսպանեմ.
 Ո՞վ է տեսել...</p> <p>Դու իմ խոսքին ականջ դիր,
 Վա՛յ, լե...</p> <p>Ես մորըդ հավան կանեմ:
 Ո՞վ է տեսել...</p> | <p>3. Akhch'i, k'u ch'arə tanem,
 Vay, le...</p> <p>K'u sirut indz kəspanem:
 Ov e tesel...</p> <p>Du im khosk'in akanj dir,
 Vay, le...</p> <p>Yes morət havan kanem.
 Ov e tesel...</p> |